

# ՅԵՅՏԵՐԵՐ ԳԻՐ ԼՐՈՅ ՄԵՆՈՒ ՏԷՐՈՒԹԵԼՆՆ ՕՍՄԵՆԵԼՆ

## ԳՈՐԾԻ ՆԵՐՔԻՆ

Միշտ թեան բարձու աստիճանաւ՝ արտաքին իրաց նորոգ կառավարիչ գործած մեծարու Ռիֆաթ փաշային՝ իրեն վեւմ պաշտօնատարութեանը յատկացեալ արքունի հրովարտակը՝ այս սեփերի ամսոյն 12 ին՝ Թագաւորին յատուկ և երևելի պաշտօնեայնե-րէն յարգի Իզլէթ պէյ էֆէնտինին հետ վերջիշեալ փաշային բնակարանը խորհրդեցաւ :

Այս նոյն արքայական հրամանագրին արժանաւոր յարգանքը տեղը տանելու՝ նաև շնորհակալութիւն մատուցանելու աղագաւ, նոյն փաշային բնակարանին երկու կողմը պէտք եղածին չափ մուզնեաներով հանդերձ կարգադրեալ զօրք գրովեցան : Այս բարձրագոյն դուան երևելի պաշտօնատարները և գլխաւոր դիւանագրիները իրենց աստիճանին նըշաններով ինչո՞ւ տեղը կանգնեցան, ու մեծաւ հանդիսիւ դիմաւորե-լով՝ այն յարգի պէյ էֆէնտին՝ յիշեալ բնակարանը տարին. ուր տեղ նոյն արքունի հրովարտակը պէյլիկձի Շէվքէթ էֆէնտին՝ ամմէնուն ներկայութեանը կարգաց, և ամմէնքն ալ միաբերան՝ Արքային երջանիկ կե-նացը երկարութեանը համար բարեմաղթութիւններ ըրին : Այս յարգի անձը՝ սակաւ ինչ հոն նստելէն յետոյ երբ գնալու եղաւ, հանդիսիւ ուղեորութեան պարտքն ալ կատարեցին :

Այլեք յառաջ տրուած Լըոյ գրքին մէջը ինչպէս որ յիշեցինք, Եպարքուի խորհրդական և պատերազմա-կան գործոց տեսուչ (հարպէյէի նազըր) գրովը Արիֆ պէյ ու Ջիւհաի պէյ էֆէնտինները՝ վեհափառ Ինքնա-կալը իւր դեմը բերել տրվաւ. որոնք ալ խոնարհու-թիւն ընելով շնորհակալութիւն ցոյց տալէն և փառա-ւորվելէն յետոյ՝ ետ դարձան :

Բարեխնամ Ինքնակալը որոյ Թագաւորութիւնը ընդ-երկայն աւուրս տեսցէ, հասարակութիւնը հանգիստ և ապահով պահելու և տէրութիւնը ծաղկեցնելու

դիտաւորութիւն՝ նորոգ բարեկարգութիւններ (Թան-զնմաթի խայրիյէ) սահմանեց, որ ամմէնքն ալ գիտենք : Այժմ ևս այն բարեկարգական կանոնաց աւելի հաստատութիւնը տալու, և անոնց վերաբերեալ գոր-ծառնութիւններն ալ կարգադրելու ու բարեխառնե-լու, նաև բարեկամ տէրութեանց հետ կապված սիրոյ կապը մշտնջենաւոր պահելու համար, այս անգամ Եպարքուին արքունական դիր (Խաղդի հիւմայուն) խրկեց. որ այս սեփերի ամսոյն 17 ին ուրբաթ օրը՝ բո-լոր նախարարներուն ներկայ գրանդված ժամանակը՝ արդարութեան վըճուոց ժողովոյն (մէճլիսի ահքեամի ատլիյէին) մէջ բարձր ձայնիւ կարդացվեցաւ. և ահա նոյն գրին միտքը ամմէնուն իմացնելու մտք՝ անոր օրինակը ներքևը արկվեցաւ :

Այժմ հաւատարիմ Եպարքու. Բարձու Թագաւորա-կան կամացս կեդրոնը ոմանք մինչև հիմա չիմացած՝ իբր թէ այս միջոցս մեր տէրութեան ներքին կառա-վարութիւնը ուրիշ եղանակի փոխվելու վրայ կարծիք-ներ ընելով, շինծու խօսքեր խօսելին տէրութեանս ականջը հասաւ, որ այն կարծիքներուն անհիմն ու սուտ ըլլալը յայտնի է. այլ կարելի է որ՝ հասարա-կութեան միտքը շփոթելու պատճառ ըլլայ :

Ուստի տէրութեանս միտքը և բարձու հրամանս՝ ահա նորէն կը ծանուցանեմ այսպէս՝ Վալ Թագաւո-րական գահը ժառանգելէս մինչև ցայժմ՝ հասարա-կութիւնը հանգստութեան մէջ պահելու և տէրու-թիւնս ծաղկեցնելու դիտաւորութեանս պատճառաւ՝ նորոգ բարեկարգութիւններ (Թանզնմաթի խայրիյէ) հաստատելու՝ ձեր ամենեցուն բացայայտ է :

Սակայն նոյն բարեկարգութիւններուն վերաբեր-եալ մէկ քանի կանոնները թէ և անկատար մնալու պէս եղաւ, այն ալ յայտնի է՝ որ ամմէն նորոգ բարեկար-գութիւն շուտմը կատարելութեան աստիճանին չի հասնիր, ՚ի հարկէ ժամանակի կարօտ կըլլայ :

Իսկ ես ամենակալին օգնութեանը ապաւինելով՝ այսուհետև այն մէկ քանի նախադիշեալ կանոններուն ալ կատարելութիւն մը տալու և բարեխառնութեան կերպիւ վարելու ջանք պիտի ընեմ :

Այս դուալ որովհետև բացարձակ փոխանորդս գրանդված ես, թէ բու կողմէդ և թէ ուրիշ նախա-

բարեբերուս կողմանէ բարեկարգութիւնը յառաջ վա-  
րելու և այն կանոններն ալ կատարելագործելու շա-  
րունակ փոյթ ու ջանք ըլլովն:

Եւ բաց յայտնանէ՝ մեր բարեկամ տէրութեանց  
հետ ալ ունեցած սիրոյ կապերնիս՝ ըստ որում անխախտ  
և մշտնջենաւոր պահելու մըտքին վրայ եմ, այս գործ-  
քիս ալ ձեր ամենուն կողմանէ լաւ նայվի: Եւ այս  
արքունի գիրս (Խաղաղի հիւմայունս) բոլոր նախա-  
բարեբերուս ներկայութեանը կարգացվելով, բարձրա-  
գոյն հրամանս ամենուն ալ հրատարակես՝:



Սիւսթրիոյ միւշի Մեհեմէտ վասիֆ փաշան իւր  
պաշտօնէն հանելը հարկ եղաւ: Աւստի Տիյարպէքլի  
միւշի Միւրա սաիտ փաշան՝ որ իւր պաշտօնատա-  
րութեան կողմը երթալու դիտաւորութեամբ արքայս  
նիստ քաղաքը եկած է, սոյն փաշան յառաջմանէ Սի-  
լիսթրիոյ կողմերը գրանրվելով այն տեղերուն տեղե-  
կութիւն ունենալուն պատճառաւ՝ Արքային հրամա-  
նաւը նոյն տեղոյն միւշի կարգեցաւ: Եւ նախայիշ-  
եալ վասիֆ փաշային ալ արքայանիստ քաղաքը դա-  
լուն և կամ ուզած տեղը կենսալուն համար՝ իրեն նա-  
մակաւ խմացումն եղաւ:

Փառաշամի սպարապետ (սերապեր) Զեքերիյա փա-  
շան խոհեմ և զօրեղ ըլլալով՝ Տիյարպէքլի միւշի  
դրովեցաւ:

Վքեայի բերդին կողմնապահ (մուհաֆըզ) Փերիդ  
Սելիմ փաշան՝ իւր գրանրված պաշտօնին մէջ ազեկ  
ջանք ընելուն, ու յաջողակ գրանրվելուն համար, ա-  
նոր ալ փառաշամի կողմերը եղած կրթեալ զօրաց միւ-  
շիութեան պատուոյ անունը, և վեղիւրութեան աստի-  
ճանաւ՝ Սոյտայի դաւառը տրովեցաւ:

Մնցեալները փառաշամի կողմերը պաշտօնատար դրը  
վող Թօփխանայի նախկին Փերիդ Բեշիտ փաշան ալ  
ուճեաձգութեան (Թօփիճիյութեան) արհեստին լաւ հը-  
մուտ և լեզուադէտ ըլլալով, Աքեայի կողմնապահ  
դրովեցաւ:



Առաջաւորին արքունի նաւատորմիղը (տօնանման)  
երթալը՝ սակեց յառաջ տրոված Լըրոյ դրին մէջը  
շիշված էր: Այժմ ևս մեծարու դահիր փաշային  
ծովապետութիւնը յանձնելուն համար, թէ այս յար-  
գի անձին և թէ ծովային զօրացը վերաբին իւր խնամ-  
քը յայտնելու մտօք, սէֆերի ամսոյն 13 ին երկուշաբ-  
թի օրը վեհապառ Ինքնակալը՝ առաջ Մեսուտիյէ կոչ-  
ված նաւը դնաց, ու անկեց ալ Ֆեվկիյէ ըսված նաւը:  
Եւ Փերիդ փաշան ու ծովային խորհրդականը՝ նաև  
ուրիշ զօրապետները դիմաւորելով՝ պէտք եղած շնոր-

հակալութիւնը ցոյց տրվին: Եւ մէկ մէկ երկերկու  
ժամ կենալէն ետքը՝ փառօք մեծաւ իւր արքունի ա-  
պարանքը դարձաւ:



Արքունական եկամուտին (մալեյէին) գանձարանին  
կողմանէ իտարե եղած մուգագաներու ու թիմարնե-  
րու, և զինամէթի պէտէնները՝ նաև սէհիմի Փաիզները  
ու վազիֆները տրովելու ժամանակը՝ լաւ կարգադ-  
րութիւն մը ըլլալու դիտաւորութեամբ, հաշիւ (մու-  
հասեպէ) գիտցող անձի մը տեսուչ դրովիլը հարկա-  
ւորեցաւ:

Այս մալեյէի մուհասեպէյին ժողովոյն անդամնե-  
րէն՝ Հէմի Եֆէնտին բաւական տեղեկութիւն ունե-  
նալուն համար, Արքային հրամանաւը Էսհամի մուհա-  
սեպէճի դրովեցաւ: Եւ Էսհամի մուհասեպէճի Էմին  
Եֆէնտին ալ Հէմի Եֆէնտին տեղը յիշեալ ժողովոյն  
անդամ կարգեցաւ:



Երզնէ-բիւմի միւշի մեծանուն Խալիլ քեամիլի  
փաշան՝ որ սակեց յառաջ Այտրնի զապի-իյէին հրա-  
մանատար դրոված էր, նոյն կողմէն արքայանիստ քա-  
ղաքը գալու ու Երզնէ-բիւմ երթալու համար՝ Ինքնա-  
կալէն ելած հրամանը իրեն ծանուցված էր:

Աւստի այժմ արքայանիստ քաղաքը եկաւ, ու վե-  
հապառ Արքային հրամանաւը իւր դէմը ներկայա-  
ցաւ, որում շնորհակալութիւն ու խոնարհութիւն ցոյց  
տալէն յետոյ՝ իւր հրամանատարութեան կողմը դնաց:



Երզնէի մուհասարը գրանրվող Խօճէկեան Քաիդ  
Եֆէնտին իրեն յանձնրված պաշտօնը լաւ կառավա-  
րելու յաջողակ չըլլալուն համար, Իզմիրու մուհասար-  
լութիւնը ու Սաղաւ սանձախին ներքեւ գրանրված  
մուհասարլութիւնները մէկ ըզմէկու հետ միացվելով,  
յարմար և խոհեմ անձի մը յանձնրվելը վայելուչ  
տեսնրվեցաւ:

Աւստի նախկին մասարիֆաթ նաղըրի Սալիհ պէյ  
Եֆէնտին ուշիմ և մտացի ըլլալով, հրամանաւ Արքայ-  
ին՝ համարակալութեան (տէֆթերատարութեան) անու-  
նով նախայիշեալ մուհասարլութիւնները անոր յանձ-  
նրվեցան, և իրեն յարգը ու վարկումը աւելցնելու  
դիտաւորութեամբ՝ առաջին ըութպէյին երկրորդ սը-  
նըֆին յատկացեալ նըշաննալ շնորհվեցաւ, որ այժմ  
իւր հրամանատարութեան կողմը երթալու վրայ է:

Տերութեանը նախարարներէն Սարիմ Եֆէնտիին եղբայր՝ արքունի տիպանին խալէմը մէկհիմմէ գրող գրագիրներէն՝ Մէհմէտ հիւանի Եֆէնտիին հաւատարիմ և գիտնական ըլլալով, Ինքնակալին պարզեացը ամմէն կերպով արժանաւոր գրտնըվելուն համար, հրամանաւ Թագաւորին՝ խօճեկեանութիւն և միանգամայն նըշանը շնորհվեցաւ:

Նախապիշեալ Սարիմ Եֆէնտիին՝ Պարսկաստան գետ պանութեամբ գացած ժամանակը՝ բովը Թարգման գրտնըվող միւսերրիս Իպրահիմ ըիւշտի Եֆէնտիին ալ ցոյց տրված հաւատարմութեանը փոխարէն՝ Սահնի խամիսէ ըսված իւլէմայից աստիճանը տըրվեցաւ:




Ինչպէս որ ասկէց յառաջ տըրված Լըրոյ գըրին մէջը յիշվեցաւ. եպարքոսին մէքթիւպչիներուն առաջին սընըֆի խիւլէֆաներէն ամէտի օտան պաշտօնատար գըրվող Բաիֆ Եֆէնտիին, ու Մահմուտ նէտիմ պէյին, և երկրորդ սընըֆի խիւլէֆաներէն՝ առաջին սընըֆը անցնելով ժամանակաւոր պաշտօնատար գըրվող Բիֆաթ պէյին, ասոնց տեղերը մէքթիւպչի օտային երկրորդ ու երրորդ սընըֆի խիւլէֆաներուն յառաջագիմներէն՝ յարմար անձանց ընտըրվել ու գըրվելը հարկ եղաւ:

Աւստի հրամանաւ Թագաւորին՝ երկրորդ սընըֆի խիւլէֆաներէն՝ միւսէյիզի վէքիլ գըտնըվող Ալի Եֆէնտիին յիշեալ Մահմուտ պէյին տեղը առաջին սընըֆը անցաւ. և մեռնող Փէրթեվ փաշային տըղան Շէհապ պէյն ալ Բիֆաթ պէյին տեղը առաջին սընըֆի մէջ ժամանակաւոր պաշտօնատար գըրվեցաւ. և երրորդ սընըֆէն Ադա պէյ ու Փէրթեվի պէյն ալ երկրորդ սընըֆը անցան. և այս յիշեալ անձանց նըշաններն ալ շնորհվեցան:



Թերսանէյին նաւապետներէն Իզզէթ ու Ապտուլահ նաւապետները՝ երկար ատեն Թերսանէյին մէջ իրենց գործքին պարսպելով, ծովային արհեստներուն հմտութիւն ըստացերէն. և մանաւանդ անցեալները Փառաշամի պատերազմին ալ քաջութիւն ցոյց տըրվերէն:

Երբ ասոնց ջանքը աւելցընելու պատճառ ըլլալու համար, Իզզէթ նաւապետին՝ Փըրդաթայի, և Ապտուլահ նաւապետին ալ գուրվէթի նաւապետութեան աստիճանները բարեխնամ Արքայէն շնորհվելով, պէտք եղած նըշանները ու սուրերը տըրվեցան:



Սամանակէ մը ՚ի վէր էր՝ որ յիւսկիւտար սելիմիէ ըսված ձմերանոցը (Խըշլան) կը նորոգվէր. որ այժմ ըսցած ըլլալով՝ վսեմախառ Արքայն երթալու ու շըջագայելու կամք ըրաւ:

Աւստի անցեալ մուհարրէմի ամսոյն 29 ին երեքշաբթի աւուր ժամը հնգին ատենները՝ եպարքոսը ու գէնպետը, սպարապետ ու ծովապետ փաշաները, վաճառականութեան գործոց տեսուչը, ու արտաքին իրաց կառավարիչը, արքունական եկամուտին վերակացուն, նաև Թագաւորական յատուկ զօրաց միւշըրը՝ ասոնք ամմէնն ալ հոն գըտնըվելով, և յիշեալ ձմերանոցին գըռնէն մինչև հարէմ խիլէֆսի ըսված նաւահանգիստը գունդ մը ձիաւոր զօրք կանգնելով՝ երբ Ինքնակալին գալտեանը կըսպասէին, նոյն ժամայն մեծաւ փառօք բարեխնամ Թագաւորը իւր յատուկ պաշտօնները հետը առած՝ իր նաւովը նոյն նաւահանգիստը գնաց:

Եւ անկէց պատրաստեալ ձին հեծնալով նոյն ձմերանոցին մէջը եղած ամարանոցը (քեօշիլ) երթալու ատենը՝ այն զօրացը կողմանէ Արքայ մեր յաւիտեան կացցէ ըսելով բարեմաղթութիւններ եղաւ, և քսանը մէկ անգամալ Թնդանօթ (Թօփ) նետվեցաւ:

Եւ մեծազօր Արքայն՝ նոյն ամարանոցին մէջը քիչ մը հանգստանալէն յետոյ՝ այն ձմերանոցին ամմէն տեղը շըրջագայելով հաւանեցաւ, և այսպէս այն զօրացն ալ իւր գուլթը և խնամքը ցոյց տալէն ետքը՝ իւր սպարանքը դարձաւ:

